ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2021 թվականի N 237-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով, 36-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում իրականացվող հաշվեքննության առաջադրանքի ղեկավարի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ» իրականացվող հաշվեքննության (ստուգման) ընթացքում առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքների վերաբերյալ նյութերը՝ «ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՆ ՏՈՒՆ» և ««ՁՈՐԱԿ» ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ների համար նախարարության կողմից կենտրոնացված կարգով անցկացված սննդամթերքի, ծխախոտի, հանդերձանքի և անկողնային պարագաների, տնտեսական, սանհիգիենիկ ու մաքրիչ նյութերի և վառելիքի գնումների գործընթացների արդյունքում հրապարակված պատճենահանված արձանագրությունները, ինչպես նաև այդ գնումների գործընթացների գնահատման հանձնաժողովներում ներգրավված

«ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՆ ՏՈՒՆ» ԵՎ ««ՁՈՐԱԿ» ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ների ներկայացուցիչների գրավոր տեղեկատվություններն, ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն, իսկ հաշվեքննությունը (ստուգումը) շարունակել:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ